



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

ՄԱԿ ՓԳՀ

Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար

Ոչ պաշտոնական թարգմանություն

Հայաստանի Հանրապետությունում դատական բարեփոխումների համատեքստում ՄԱԿ ՓԳՀ-ի առաջարկությունները ապաստանին առնչվող գործերի վերաբերյալ

ՇԱՀԱՊԱՇՏՊԱՆ ՓԱՍՏ ԱԹՈՒՂԹ

Ներածություն

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է այս փաստաթուղթը որպես Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից փախստականներին և իր մանդատի ներքո գտնվող այլ անձանց միջազգային պաշտպանություն տրամադրելու, ինչպես նաև կառավարություններին փախստականների համար մշտական լուծումներ գտնելու հարցում աջակցելու լիազորությամբ օժտված գործակալություն: Ինչպես նշված է իր Կանոնադրության մեջ¹, ՄԱԿ ՓԳՀ-ն միջազգային պաշտպանության իր մանդատը իրականացնում է, *այդ թվում, «փախստականների պաշտպանությանն ուղղված միջազգային կոնվենցիաների կնքմանն ու վավերացմանը նպաստելու, դրանց կիրառումը վերահսկելու և դրանցում փոփոխություններ առաջարկելու»* միջոցով: ՄԱԿ ՓԳՀ-ի իր Կանոնադրությամբ սահմանված վերահսկողական լիազորությունը վերահաստատված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի («1951թ. կոնվենցիա») հոդված 35-ում, համաձայն որի՝ մասնակից պետությունները պարտավորվում են *«համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի [...] հետ իր գործառնությունների իրականացման հարցում և, մասնավորապես, հեշտացնում են սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը վերահսկելու նրա պարտականության կատարումը»*: Նույն պարտավորությունը ամրագրված է Փախստականների կարգավիճակի մասին 1967թ. արձանագրության 2-րդ հոդվածում («1967թ. արձանագրություն»):

Ընդհանուր տեղեկություններ

Սույն փաստաթուղթը կազմվել է Հայաստանում սպասվող դատական բարեփոխումների համատեքստում ՄԱԿ ՓԳՀ-ի և նրա գործընկերների շահապաշտպան աշխատանքները կազմակերպելու և հեշտացնելու նպատակով:

Հայաստանի դատական համակարգը եռաստիճան է. այն բաղկացած է առաջին ատյանի դատարաններից (վարչական դատարան և ընդհանուր իրավասության դատարաններ), վերաքննիչ դատարաններից (երկրորդ ատյանի դատարաններ) և վճռաբեկ դատարանից: Վճռաբեկ դատարանի (երրորդ ատյանի դատարան) դերը պասիվ է (այն միայն վերանայում է իրավունքի հարցեր), և ապաստանի հայցերը բացառապես քննվում են մյուս երկու՝ ավելի ցածր ատյանների դատարանների կողմից: ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից սատարվող միջազգային

¹ Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կանոնադրություն, Գլխավոր ասամբլեայի 1950 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 428 (V) բանաձև, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.unhcr.org/protection/basic/3b66c39e1/statute-office-United-nations-high-commissioner-refugees.html> :

չափանիշներով պահանջվում է միայն մեկ մակարդակի դատական վերանայում: Ուստի, ՄԱԿ ՓԳՀ-ն մտահոգված է բազմաթիվ դատական մակարդակներով, որոնք համակարգն անարդյունավետ են դարձնում:

Գոյություն ունեն երկու հիմնական իրավիճակներ, երբ ապաստան հայցողները և փախստականներն ապաստանին առնչվող իրենց հարցերով Հայաստանում կարող են դիմել տեղական դատարաններ՝ այդպիսով օգտվելով պատշաճ իրավական ընթացակարգի կամ ընթացակարգային արդարության իրենց իրավունքից:

- 1) **Վարչական դատավարություն.** միգրացիոն ծառայության որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարանում 60 օրվա ընթացքում, և բողոքն ունի ավտոմատ կասեցնող ազդեցություն: Դատական վերանայման համար հստակ ժամկետ սահմանված չէ: Վարչական դատական վերանայումն իրականացվում է «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի² և վարչական դատավարության օրենսգրքի հիման վրա: Վարչական դատարանը վերանայում է (i) ապաստանի դիմումների վերաբերյալ միգրացիոն ծառայության բացասական որոշումները և (ii) միջազգային պաշտպանության կարգավիճակը կամ ապաստանը անվավեր ճանաչելու, հետ վերցնելու, դադարեցնելու կամ չեղյալ հայտարարելու մասին միգրացիոն ծառայության որոշումները:
- 2) **Քրեական դատավարությունը** վերաբերում է (i) ապաստան հայցողներին ապօրինի մուտքի համար երկարաժամկետ ազատազրկման դատապարտելուն և (ii) ծագման երկրից ստացված՝ հանձնման մասին միջնորդություններին: Այս համատեքստերում դատական ընթացակարգերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի հիման վրա:

Հիմնական բացերի և թերությունների համառոտ նկարագրություն

Դատական վերանայման ընթացքում գտնվող ապաստանին առնչվող գործերը Հայաստանում բախվում են մի շարք մարտահրավերների՝ ապաստանի հայցերի հետ կապված բողոքների քննության խիստ վերջնաժամկետների բացակայության և դատարանների ընդհանուր ծանրաբեռնվածության պատճառով: Արդյունքում գործի դատական վերանայումը առաջին ատյանի դատարանում տևում է շուրջ մեկ տարի, մինչդեռ վերաքննիչ դատարանում գործի քննությունը նշանակվում է բողոքը ներկայացնելուց «միջինը» մեկ տարի հետո: Սա հատկապես մտահոգիչ է, երբ դիմողները ապօրինի սահմանահատման համար գտնվում են մինչդատական կալանքի տակ, քանի որ ապաստան հայցողները կարող են զգալի ժամանակ անցկացնել կալանքի տակ, նախքան բոլոր հնարավոր բողոքարկումներից հետո ապաստանի գործով վերջնական որոշում կկայացվի:

Տեղին, օբյեկտիվ և թարմ ծագման երկրի մասին տեղեկատվությունը (ՄԵՏ) վճռորոշ նշանակություն ունի փախստականի կարգավիճակի որոշման և վերադարձի խոչընդոտների գնահատման համար: Ներկայումս Հայաստանում առկա չէ որևէ անկախ և փորձառու հաստատություն, որը կարող է ՄԵՏ ուսումնասիրություն իրականացնել: Միգրացիոն ծառայության ներկա կարողությունը բավարար չէ դատական համակարգի և այլ համապատասխան պետական մարմինների կարիքներն ու պահանջները բավարարելու համար, որոնք պատասխանատու են արտաքսման և հանձնման ընթացակարգերի համար և

² Հայաստան. «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թ. թիվ ՀՕ-211-Ն օրենք (2015թ.) [Հայաստան], 27 նոյեմբերի 2008թ., <http://www.refworld.org/docid/4f1986412.html>

պետք է արդյունավետ կերպով գնահատեն վերադարձի հնարավորությունը՝ փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերին համապատասխան:

Վարչական դատավարությունը

Վարչական դատարանների համակարգը խիստ ծանրաբեռնված է և ունի անձնակազմի, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների պակաս: Դատարանի կողմից ապաստանի հայցերի հետ կապված բողոքների քննության համար որևէ ժամկետ նախատեսված չէ: Արդյունքում ապաստանի գործերի քննության միջին ժամկետը տևում է 3 տարի:

Վարչական դատարաններ ներկայացվող՝ ապաստանին առնչվող բողոքները առանձնահատուկ են իրավական վերլուծության, ապացուցման բեռի և ստանդարտի առումով, դրանք պահանջում են այլ մոտեցումներ փաստերի հավաքագրման, նյութերի և ապացույցների գնահատման հարցում և ենթադրում են համապատասխան ԾԵՏ ուսումնասիրություն, որպեսզի հնարավոր լինի իրականացնել յուրաքանչյուր ապաստանի դիմումի առանձին, արդար և արդյունավետ քննություն ըստ էության: Ուստի, ծախսերի և ժամանակի արդյունավետ կառավարման առումով օգտակար է դիտարկել դատական համակարգում ապաստանին առնչվող գործերի քննության համար հատուկ ընթացակարգ նախատեսելու հարցը: Նման մոտեցում է որդեգրվել բազմաթիվ երկրներում (օրինակ՝ Ավստրիա, Բելգիա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Շվեդիա և Միացյալ Թագավորություն), և ՄԱԿ ՓԳՀ-ն պատրաստ է կիսվել այս ոլորտի հաջող փորձով:

Դատավորների մասնագիտացումը փախստականներին առնչվող իրավունքի ոլորտում լավ պրակտիկա է՝ հաշվի առնելով այս տեսակի գործերի յուրահատկությունները: Փախստականներին առնչվող երկու դասընթացներ են մշակվել Արդարադատության ակադեմիայի կողմից, և բոլոր դատավորներին հարկ է խրախուսել մասնակցելու այդ դասընթացներին: Դատավորների կարողությունների պարբերական զարգացումը և մասնագիտացումը փախստականներին առնչվող իրավունքի ոլորտում կնպաստի ապաստանի հայցերի արդյունավետ և պատեհաժամ քննությանը: Դատավորների մասնագիտացումը նաև թույլ կտա արագացնել որոշումների կայացման գործընթացը և ապահովել հետևողականություն դատական պրակտիկայում:

Բացեր են առկա նաև զսպումների և հակակշիռների գոյություն ունեցող համակարգում՝ կապված ապաստանին առնչվող գործերում ազգային անվտանգության նկատառումների կիրառման հետ: Միշտ չէ, որ դատավորները ի վիճակի են լինում արդյունավետ կերպով վերանայել և մանրամասն ուսումնասիրել ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) կողմից տրամադրված փաստերը, որպեսզի գնահատեն, թե արդյոք ազգային անվտանգության նշված պատճառները զգալի կշիռ ունեն: Ո՛չ մերժում ստացած ապաստան հայցողների ու փախստականների, ո՛չ էլ նրանց օրինական ներկայացուցիչների համար հասանելի չէ ԱԱԾ-ի տրամադրության տակ գտնվող դասակարգված տեղեկատվությունը, ինչը խոչընդոտում է դատարանում նրանց շահերի արդյունավետ ներկայացմանը և ընդհանուր առմամբ բացասաբար է ազդում դատական համակարգի՝ անվտանգության հետ կապված հնարավոր մտահոգություններ առաջացնող գործերի բոլոր համապատասխան ասպեկտների լիարժեք քննություն իրականացնելու կարողության վրա:

Ավելին, վարչական դատավարության օրենսգիրքը իրավական ուղիներ չի նախատեսում դատարաններին երրորդ կողմի, մասնավորապես՝ ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքների և դիրքորոշումների՝ որպես *amicus curiae* (դատարանի ընկեր) միջամտությունների տեսքով ներկայացման համար՝ կապված (i) Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի

կոնվենցիայի և Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 թվականի կոնվենցիայի մեկնաբանության, (ii) Հայաստանի՝ փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց առնչվող միջազգային պարտավորություններին համահունչ կերպով ազգային օրենսդրության մեկնաբանության և (iii) ծագման երկրում առկա պայմանների վերլուծության հետ:

Կարևոր է նաև ապաստանին առնչվող գործերով օրենքով և գործնականում երաշխավորել անվճար և որակյալ իրավաբանական աջակցություն և ներկայացուցչություն: Չնայած ապաստան հայցողներն ու փախստականներն իրավունք ունեն ստանալու անվճար իրավաբանական օգնություն Հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ հանրային պաշտպանների պակասը, փախստականներին առնչվող իրավունքի ոլորտում մասնագիտացման պակասը և թարգմանության համար նախատեսված ֆինանսական միջոցների բացակայությունը մտահոգություններ են առաջացնում՝ կապված գործնականում իրավաբանական օգնության և ներկայացուցչության արդյունավետության հետ: Ներկայումս ապաստանին առնչվող գործերի մեծ մասում որպես ներկայացուցիչ հանդես են գալիս «Առաքելություն Հայաստան» հկ-ի իրավաբանները, որը ֆինանսավորվում է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է.

- Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով խրախուսել միգրացիոն ծառայությանը ներդնել հանձնաժողովի միջոցով բողոքների արդար և արդյունավետ վերանայում՝ այս գաղափարի վերաբերյալ քննարկում և իրագործելիության ուսումնասիրություն սկսելով: Հանձնաժողովը իր վրա կվերցնի դատարանների ծանրաբեռնվածության որոշ մասը կառավարության կառուցվածքում այլընտրանքային վերանայում առաջարկելով:
- Վարչական դատավարության օրենսգրքում նախատեսել ապաստանին առնչվող գործերի դատական վերանայման հատուկ ընթացակարգ, որը կապահովի ինչպես փաստերի, այնպես էլ իրավունքի հարցերի լիարժեք քննություն: Այս հատուկ ընթացակարգը կարող է, օրինակ, կրճատել ընդհանուր եռաստիճան դատական վերանայումը:
- Խրախուսել դատավորների մասնագիտացումը փախստականներին առնչվող իրավունքի ոլորտում և Արդարադատության ակադեմիայի առկա դասընթացների միջոցով աջակցել դատավորների և դատավորների օգնականների կարողությունների պարբերական և պարտադիր հզորացմանը փախստականներին առնչվող իրավունքի ոլորտում:
- Դիտարկել ԾԵՏ ուսումնասիրության անկախ մասնագիտական կենտրոնի ստեղծման հարցը և ապահովել դրա ծառայությունների հասանելիությունը բոլոր համապատասխան պետական կառույցների համար, որոնք զբաղվում են ապաստանի վերաբերյալ որոշումների կայացմամբ, հանձնման, արտաքսման և վերադարձի ընթացակարգերով (միգրացիոն ծառայության ԾԵՏ ուսումնասիրությունների բաժինը կարող է հանդես գալ որպես ելակետ՝ հաշվի առնելով դրա փորձը և կարողությունը):
- Ապահովել, որ ազգային անվտանգության նկատառումների պատճառով չտուժի փախստականների պաշտպանությունը, և նախատեսել դատավորների, ապաստան հայցողների և/կամ նրանց ներկայացուցիչների համար պահանջվող

համապատասխան տեղեկատվության հասանելիության ապահովման արդյունավետ մեխանիզմ՝ միջազգային չափանիշներին համապատասխան, ինչը կապահովի արդար և արդյունավետ քննություն ապաստանին առնչվող գործերում:

- Նախատեսել դատավարությանը չեզոք երրորդ կողմի միջամտության հնարավորություն՝ որպես իրավական ուղի, որով ՄԱԿ ՓԳՀ-ն և այլ դերակատարներ կկարողանան ներկայացնել իրենց կարծիքները կամ դիրքորոշումները:
- Օրենքով և գործնականում երաշխավորել անվճար որակյալ իրավաբանական օգնություն և ներկայացուցչություն ապաստանին առնչվող գործերում:

Քրեական դատավարությունը

1. Ապօրինի մուտքի համար պատժի բացառումը

Քրեական գործեր քննող դատարանները շարունակում են Հայաստան ապօրինի մուտք գործող ապաստան հայցողների նկատմամբ կիրառել երկարաժամկետ կալանավորում և ազատազրկում: Նման պրակտիկան շատ դեպքերում հակասում է փախստականներին առնչվող միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, և դրան հարկ է անդրադառնալ դատական բարեփոխումների շրջանակում՝ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ կատարելու միջոցով:

1951 թվականի կոնվենցիայի հոդված 31(1)-ով հաստատվում է, որ ապաստան հայցելու իրավունքից օգտվելիս փախստականները հաճախ հարկադրված են լինում ժամանել, մուտք գործել կամ մնալ որևէ երկրի տարածքում առանց համապատասխան թույլտվության: 1951 թվականի կոնվենցիայի հոդված 31-ի արդյունավետ կիրառումը իշխանության բոլոր՝ օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի պարտականությունն է: Այն պահանջում է համագործակցություն, համաձայնեցում և հաղորդակցություն պատասխանատու հաստատությունների և դերակատարների, հատկապես՝ սահմանապահ ծառայության, դատախազության և ապաստանի հարցերով զբաղվող մարմնի միջև:

Չնայած ն՝քրեական օրենսգրքի³ հոդված 329-ի 3-րդ մասը, ն՝«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի հոդված 28-ի 1-ին մասը թեկուզև փոքր-ինչ տարբեր կերպով, բայց արտացոլում են 1951 թվականի կոնվենցիայի հոդված 31-ում արտացոլված՝ փախստականներին առնչվող միջազգային իրավունքի պատժի բացառման սկզբունքը, այս կարևոր իրավունքը ոչ միշտ է գործնականում պահպանվում: Որոշ ապաստան հայցողներ դեռևս շարունակում են կալանավորվել և ենթարկվել երկարատև ազատազրկման անօրինական կերպով Հայաստան մուտք գործելու համար: Որոշ դեպքերում դատարանները շարունակում են մեկնաբանել, որ քրեական օրենսգրքի հոդված 329-ի 3-րդ մասը պահանջում է Հայաստանում ապաստան հայցելու նախնական մտադրություն՝ այն դարձնելով ապօրինի մուտքի համար պատժի բացառումից օգտվելու անհրաժեշտ պայման: Հայաստանում պաշտպանություն հայցելու նախնական մտադրության պահանջ ոչ միայն առկա չէ 1951 թվականի կոնվենցիայի հոդված 31-ում, այլև այն բացակայում է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ում, որն արտացոլում է պատժի բացառման

³ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, 18 ապրիլի 2003թ. , ոչ պաշտոնական թարգմանություն, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=527766599> և 21 հունիսի 2014թ. փոփոխություններ՝ <http://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=5bc456984> .

սկզբունքը ազգային օրենսդրության մեջ: Այս երկու դրույթների լույսի ներքո պարզ է դառնում, որ քրեական օրենսգրքի հոդված 329-ի 3-րդ մասը չի կարող մեկնաբանվել որպես նախնական մտադրության պահանջ սահմանող:

Այսպիսով՝ ՄԱԿ ՓԳՀ-ն հանդես է գալիս հոգուտ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 329-ի 3-րդ մասում ամրագրված՝ *պատժի բացառման սկզբունքի* փոփոխության, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ի համանման դրույթին այն համապատասխանեցնելու նպատակով՝ այդպիսով՝ երաշխավորելով դրա մեկնաբանումը *Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի* հոդված 31(1)-ին համահունչ կերպով⁴:

Ավելին, պատժի բացառման դրույթը հարկ է նաև դիտարկել քրեական օրենսգրքի հոդված 325-ի համատեքստում՝ կանխելու քրեական պատասխանատվությունը այն դեպքերում, երբ ապաստան հայցողները ստիպված են օգտագործել անբավարար, կեղծ կամ անօրինական ճանապարհով ձեռք բերված փաստաթղթեր՝ Հայաստան մուտք գործելու համար⁵:

Քրեական դատավարության շրջանակներում անվճար իրավաբանական օգնությունը երաշխավորված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի հոդված 41-ի ուժով:⁶ Այդուհանդերձ, պրակտիկայում ծանրաբեռնվածության և թարգմանության համար նախատեսված միջոցների բացակայության պատճառով միշտ չէ, որ հանրային պաշտպանները կարողանում են նախքան առաջին դատական նիստը կամ այդուհետ դատական գործընթացում հանդիպել կալանավորված անձանց, այդ թվում ապաստան հայցողներին և փախստականներին: Նման իրավիճակը խոչընդոտում է արդյունավետ և ժամանակին իրավաբանական խորհրդատվության տրամադրումը և բացասաբար անդրադառնում դատական նիստերին նախապատրաստության և մասնակցության որակի և ժամանակին ապացույցների հավաքագրման վրա:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է.

- Փոփոխություններ կատարել քրեական օրենսգրքի հոդվածներ 325-ում և 329-ի 3-րդ մասում՝ երաշխավորելու պատժի բացառման սկզբունքի մեկնաբանությունը 1951 թվականի կոնվենցիայի հոդված 31(1)-ին համապատասխան:
- Դատական վերանայման բոլոր փուլերում ապահովել որակյալ իրավաբանական օգնություն:

2. Հանձնումը և ապաստանը

Քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում առկա են հանձնման ընթացակարգերի հետ կապված որոշ բացեր և թերություններ՝ որոնք գործնականում դժվարություններ են առաջացնում և վտանգի տակ են դնում *չվերադարձելիության* սկզբունքի պահպանումը, որը նախատեսված է *Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի* հոդված 33(1)-ով և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական

⁴ ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները Հայաստանի Հանրապետության նոր Քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ՝ մասնավորապես անդրադառնալով գործող Քրեական օրենսգրքի հոդված 329(3)-ի ձևակերպմանը, 2016թ. հուլիս, («ՄԱԿ ՓԳՀ մեկնաբանությունները նոր Քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ»), <http://www.refworld.org/docid/5a69a3304.html> :

⁵ Նույն տեղում:

⁶ Ազգային օրենսդիր մարմիններ/ազգային իշխանություններ, Հայաստան. «Փաստաբանության մասին» օրենք, 14-ը դեկտեմբերի 2004թ.,

նորմերով, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 3-ով, որը բացարձակապես արգելում է վերադարձը այն դեպքում, երբ անձը ենթարկվելու է խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի⁷:

Հանձնման վերաբերյալ օրենսդրությունը պետք է ներառի հստակ դրույթներ, որոնք պարտադրում են համապատասխան պետական մարմիններին (ազգային անվտանգության ծառայություն, այդ թվում՝ սահմանապահ զորքեր, գլխավոր դատախազություն, արդարադատության նախարարություն և ոստիկանություն) հանձնմանն առնչվող վարույթի համատեքստում ներկայացված ցանկացած ապաստանի դիմում արդյունավետ կերպով անհապաղ ուղղորդել միգրացիոն ծառայություն:

Նաև խիստ կարևոր է հանձնման վերաբերյալ օրենսդրության մեջ երաշխավորել, որ այն դեպքում, երբ գոյություն ունի քննության մեջ գտնվող ապաստանի հայց, հանձնման վերաբերյալ որոշման կատարումը պետք է ավտոմատ կերպով կասեցվի, քանի դեռ ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում չի կայացվել:

Հանձնման վարույթի համատեքստում միջնորդություն ներկայացրած պետությանը տեղեկատվություն տրամադրելիս համապատասխան մարմինները պետք է հաշվի առնեն ապաստան հայցողների և փախստականների՝ գաղտնիության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության նկատառումները, ինչպես նաև նրանց հետ կապված անձանց (օրինակ՝ ծագման երկրում մնացած նրանց ընտանիքի անդամների) պաշտպանության հնարավոր ռիսկերը՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքին համապատասխան: Այս իմաստով նրանց ապաստանի խնդրանքի, ապաստանի հայցի էության և ապաստանի տրամադրման ընթացակարգի մասին որևէ տեղեկություն ծագման երկրին չպետք է տրամադրվի:

Կարևոր է ապահովել գործուն, արդյունավետ և որակյալ իրավաբանական օգնություն և ներկայացուցչություն հանձնման գործընթացի բոլոր փուլերում, մասնավորապես այն դեպքում, երբ հանձնման նպատակով կալանավորված ապաստան հայցողներն ու փախստականները չեն կարող վճարել դրա համար:

Բացի այդ, հանձնման գործընթացի բոլոր փուլերում պետք է տրամադրվի հմուտ թարգմանչի աջակցություն, որը կհեշտացնի դիմողի, նրա ապաստանի հայցի և վերադարձի խոչընդոտների մասին տեղեկատվության գործուն և արդյունավետ հավաքագրումը:

Ավելին, եթե կան բավարար հիմքեր կարծելու, որ հանձնման գործընթացում գտնվող անձին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 3-ին հակասող վերաբերմունքի ենթարկվելու իրական վտանգ է սպառնալու (այն է՝ խոշտանգումներ, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք և/կամ պատիժ), համապատասխան մարմինների կողմից պետք է իրականացվի ծագման երկրի օրենսդրության և պրակտիկայի իրավական վերլուծություն, այդ թվում՝ տրամադրված դիվանագիտական երաշխիքների մանրակրկիտ ուսումնասիրություն (եթե խնդրո առարկա անձը ապաստան հայցող է, այս որոշումը պետք է կայացվի ապաստանի հարցերով լիազոր մարմնի կողմից)⁸:

⁷ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները հանձնման և ապաստանի հարցերին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրական նորմերի լրամշակումների վերաբերյալ*, 2018թ. հունիս, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5bd81c584.html> :

⁸ ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *Ուղղորդող ծանոթագրություն հանձնման և փախստականների միջազգային պաշտպանության վերաբերյալ, 2008թ. ապրիլ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.refworld.org/docid/481ec7d92.html> :*

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է.

- Դիտարկել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ և 54¹ -րդ գլուխները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 16-ը ամբողջությամբ վերանայելու հարցը՝ փախստականների պաշտպանության միջազգային չափանիշներին համապատասխան պատշաճ երաշխիքներ ապահովելու նպատակով, և ներառել հստակ հղում «Փախստականների և ապաստանի մասին» օրենքին այն դեպքում, երբ հանձնման գործընթացում գտնվող անձը ապաստան է հայցում Հայաստանում:

Ամփոփում

Քանի որ ինչպես վարչական, այնպես էլ քրեական գործեր քննող դատավորների կարողությունների զարգացումը փախստականներին առնչվող իրավական նորմերի ոլորտում նախկինում ակնհայտորեն դրական ազդեցություն է ունեցել, հարկ է շարունակել այս ջանքերը՝ ուշադրություն դարձնելով նշված մարտահրավերներին/բացերին, աստիճանաբար ավելի շատ ապավինելով այդ ոլորտում արդեն իսկ վերապատրաստված՝ համակարգում գործող դատավորներին, ցուցադրելով որակյալ դատական ակտերի օրինակներ, արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագիրը լրացնելով փախստականներին առնչվող իրավական նորմերի վերաբերյալ ավելի խորացված դասընթացներով, ինչպես նաև առանձին միջոցառումների միջոցով, այդ թվում՝ համագործակցելով Եվրոպայի խորհրդի հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Առաջիկա դատական բարեփոխումների համատեքստում ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է օգտվել հնարավորությունից և ապաստանին վերաբերող գործերով արդար, գործուն և արդյունավետ դատական վերանայման հետ կապված հարցեր բարձրացնել, որոնց նպատակն է ապահովել, որ բարեփոխումների գործընթացում հաշվի առնվեն նաև ապաստան հայցողների և փախստականների հատուկ իրավիճակն ու պաշտպանության ռեժիմը: Կարևոր է նաև հաշվի առնել, որ բարեփոխումները պահանջում է պետական միջոցների հատկացում և սերտ համագործակցություն ու համաձայնեցում համապատասխան պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների միջև: Այս իմաստով ՄԱԿ ՓԳՀ-ն կառավարության տրամադրության տակ է քննարկումների համար և պատրաստակամ է տրամադրելու պահանջվող փորձառությունն ու աջակցությունը:

ՄԱԿ ՓԳՀ
2019 թ. սեպտեմբեր